ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2022 թվական N 1055-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԽՈՇՈՐ ԵՎ ՄԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արգելել Արցախի Հանրապետության տարածքից ԱՏԳ ԱԱ 0102, 0104, 0201, 0202 և 0204 ծածկագրերով ապրանքային դիրքում դասակարգված համապատասխանաբար խոշոր և մանր եղջերավոր կենդանիների (այդ թվում՝ նրանցից ստացված մսի, մսեղիքի և կիսամսեղիքի) արտահանումը, բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից մեկ անձի հաշվարկով հինգ կիլոգրամը չգերազանցող չափով մասնատված մսի, մսեղիքի և կիսամսեղիքի արտահանման:

2. Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ վերահսկողություն սահմանել սույն որոշման իրականացման նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***